

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Տես յ'էջ 347)

ՈՒՐԱԹԱԳԻՐՔ



ԱՌՆՐԻՆ այս ամենահին տպագրին, մեծութիւն, զարդեր, և ի վերջ կոյս մատենին զրոշմուած՝ մի և նոյն նըշանն խաչազարդ, նոյնանիշ երոպական տառերով, ամենին տարակոյս չեն թողոր հաւաստելու որ մի և նոյն տպագրասան արդիւնք է և արգասիք՝ որպէս նախկին յիշուածներն:

Գիրքն զխաւոր երկու մասն բաժնուած է, ինչպէս կը ցուցնեն նաև խորագրերն որք ամէն երեսի վրայ կրկնուած են: Առաջին մասն է յատկապէս Ռարբարագիրք կամ Սոարթ Ռարբար կոչուածն, և առաջին թղթոյն առաջին մասին մէջտեղն՝ կարմրագրով տպուած է. « Անուն գրոցս է սուրբ ուրբաթ գիրք »: Իսկ երկրորդ մասն՝ որ կը սկսի Արօթք Եփայրիանոսի խորագրաւ, կը բովանդակէ զանազան գլուխներ, ինչպէս քիչ վերջը պիտի նշանակենք:

« Ուրբաթագիրք կը բովանդակուին քսանըջորս թղթերու մէջ. և ի սկզբան ունի հոս գրուած պատկերն յորում հայ արեղայի տարազն կ'երեսի հիւանդի մեռ կանգնած: Այս պատկերն կրկնուած է նաև երկրորդ մասին սկիզբը: Բանասիրաց հետաքննութեան համար կը ներկայացրենմք աստ (յ'էջ 395) նաև նոյն պատկերին դէմ գտնուած՝ առաջին երեսին նմանահանութիւնն, որով կարող կը լինին մեր ընթերցողք ճիշդ գաղափար ունենալ հայկական ամենահին տպագրութեանց տառից ձևերուն:

« Այս առաջին մասէն ետքը, որ բովանդակութիւն է երգմեցուցական ձևերու ընդ-

դէմ սատանայից, կախարաց և դիւթից, յ'էջ 49 կը սկսի երկրորդ մասն՝ Արօթք Ս. Եփայրիանոսի « զոր տասցեալ է վասն դի-



ւաց և կախարաց և աղանդոց », հանդերձ կանխարանով մի՛ յորում ինքն Եփայրիանոս կը պատմէ իւր կախարական հնարքները,

գորս ի գործ կը դնէր յառաջ քան զգարձն ի քրիստոնէութիւն. և կ'աւարտի այս ազօժքս յ'էջ 54 (Թուղթ Դ. Գ.) հետեւեալ բառերով. « Եւ ամենայն կայեալք արձակումն առցեն. վեցհազար և վեցհարիւր եաթանասուերկու աղանդս կանանց և կախարաց և շարաից և շարեզուաց. և ամենայն

Ուրբաժ

Ուրբաժաւարկամշտնէք շաբթի տանին զհինգ անդսի դոռննեկեղեցոյս: Եւ ասէն զճարցի հասարակութեան զեկեղեցոյս: Եւ ապայաւեստաւորութեան ի կողմնս զըրմեայ. և ասէն զաղաւթս:



արդամբ քաղքեզ զայն րոմակերոյ յի քիտր զաւրոն թեանց որ զգազանն կապեցեր և զդիւացի ի ամսութիւն աղաւթապարտեցեր: Մեծեարուտիւ և անպատու մյուսաց լոցսիք եզ լճկալ զաղաւթս անսոճ յից բոց. և զաղաւթսայից. Խօստոպանի անբ:

որոգայթ արձակեալ և հետացեալ եղիցի ի ծառայէս Աստուծոյ Մարտիրոսին»: Այս վերջին անունս զրոշմուած է ձեռքով նուաբազիր. որ կը ցուցնէ զստացողն մատենին. որ ոչ միայն այստեղ, այլ նաև ամէն մէկ մաղթողական աղօթից վերջը գրուած է, և ուրիշ տեղ ալ՝ յատկապէս ի վերջ կոյս գրու-

քին՝ յ'էջ 108 (Թուղթ ԳԳ. Ը.) զլիազիր տաւերով կը զրոշմուի, ինչպէս կ'երևայ, ի տպագրողէն, կամաւ սպիտակ թղթուած տողի մէջ, այս ձեւովս.

Բն անկեալի
երամեացաւրաւ քնհալածեաց
ցգղեան: Ա ուրբեալսն սբ
աւետարանն. ասգնականե
պահապան լիցի ծառայիսայ:
ՄԱՐ Տ Ի ՐՈՍԻՆ
և Իւրաւանասն և Եղեցի:

« Այս պարագայս այնպէս կարծել կու տայ թէ զիրքն տպագրողին համար պիտի ծառայէր իբր սոսի շահողութեան աղբիւր մը, օգտուելով ժամանակին բարեմիտ ջերմեանցներէն, որք հաստոր կ'ընծայէին առասպելածուն զիւսց կամ հրէշից և զօրութեանց, իբրև կարող ըստ կամս ի շարաբել զմարդիկ նաև յետ փրկագործութեան Բանին Աստուծոյ:

« Ի վերջ մաղթանաց Կիպրիանոսի, յ'էջ 54 (Թուղթ Դ. Գ.) կը զրոշմուի Պատմութիւն Յռատիանեկ հոսսին, որ է համառօտի յիշատակութիւն՝ գարձի Ս. Կիպրիանոսի, և կ'աւարտի՝ յ'էջ 60 (Թուղթ Դ. Գ.) ուր կը սկսի նոր խորագրով Մարտանք ստ ամենայն տարբա Աստուծոյ, որ շարք մի է անուան ամենայն սրբոց, որոց բարեխօսութիւնն կը հայցուի ստորագրեալ գրոց ստացողին համար, որ մեր օրինակին մէջ վերոյիշեալ Մարտիրոսն է:

« Կը շարունակուի զիրքն, յ'էջ 71 (Թուղթ Ե. Դ.) Նարեկացոյն « Որքի Աստուծոյ » ծանօթ երեկոյին ազօթիւք, որոյ կը յաջորդեն յ'էջ 74 (Թուղթ Ե. Ե.) հետեւեալ տողերն. « Եւ ես յամենայն ժամ գայս ասեմ թէ հանապազ այս գիրքն ի զրկիս, աստուածաբան ի բերանիս, ձեռագիրն ի ճակատիս, այս սէրս սէր է իմ սրբտիս, և անմտաց ի յիմ մտիս: Մարմինս տուն է տէրունի, միտքս նման սուրբ քա-

հանի, սիրտս տեղի սուրբ սեղանի, խոր հուրդս անարատ պատարագի, ազօթքս խունկ ընդունեղի: ... Այդ երգումն առա՛ վկայու թեամբ սուրբ գրոյս պատրիկ զոր գրեցաք. ուր լինի զիրս և ուր կարդացի, ոչ մերձե նայ ի տունն այն շար և ոչ որդայթ. ոչ ի այր մարդ և ոչ ի կին. ոչ ի ծեր և ոչ ի տղայ, ոչ երիտասարդ և ոչ ի կուսան, ոչ ի մէն կենայն և ոչ ի ճանապարհի. այլ կապած է ամենայն շար ի զե՛մ ծառայես Աստուծոյ Մարտիրոսին » : Որով յայտնի կը տեսնուի թէ այր գիրքս իբրու յուսուցում լունք մի պիտի ծառայէր ստացողին համար :

« Այս մաղթանքս ետքը գրոյմուած են չորս անտարանք բժշկութեանց, մի մի յիւրաքանիւր անտարանաց, որ կ'աւարտին յէջ 86 (թուղթ Գ. Գ.) :

« Ի վերջ անտարանացն սպիտակ թուղուած է մնացորդ կէս էջն. և յաջորդ թուղթն որ պիտի լինէր Գ. Գ. կը պակասի. որով Գ. Ե. թուղթն անվերնագիր շարայարութիւն է գոզարիկ զղջական ազօթքի մը, որ Աշաքք փոկասառ կը մակագրի, և կը ձգի մինչև ցվերընթեր թուղթն (Գ. Ե.) վեցերորդ թերթի, ուր կ'աւարտի փառաբանութեամբ սուրբ Երրորդութեան :

« Աստ կը պակասին Գ. Բ. և Ե. ա երկու թուղթք. վասն զի յ'էջ 105 կը գտնուի թուղթ մի նշանակեալ Ե. Բ. Անասիարի այս գիր վերնագրով՝ երգմնեցուցութեան պատահիկ մի, որոյ՝ ինչպէս սկիզբն, այսպէս ալ աւարտն կը մնայ թերի, պակասելով յաջորդ թուղթերն : Բայց ընդ մէջ այս վերջին թղթեկիս և նախընթացին (Գ. Ե.) եկամուտ ամբողջ թերթ մի կազմուած է, որ հաւանօրէն ուրիշ գրքի կը վերաբերի. և պատահական կերպով այս տեղ մուտ գտեր է. վասն զի թերթին գրանշանքն են համրուած ԳԳ. — ԳԳ. Բ. — ԳԳ. Գ. — ԳԳ. Բ. վերջին, ուր կը գտնուի վերոյիշեալ Մարտիրոսին ստորագրութիւնը : Բայց ինչպէս նախընթացաբար ըսինք, նոյն այս թերթին աւելի օրինակ մ'ալ ունինք առանձինն, ըստ ամենայնի համաձայն Ուրբաթագրոց մէջ կազմուածին, բայց ի Մարտիրոսին ստորագրութեան պակասութենէն, ուր պիտակ մնացեր է :

« Այս թերթիկս՝ եթէ չուզենք ուրիշ հրատարակութեան մի մասն համարիլ, որոյ իբր պայցոյց կրնան ծառայել կրկնանիշ տաւըն ԳԳ. — ԳԳ. Բ. և այլն, կրնանք ըսել որ առանձին տեսք մի է, մի և նոյն տպագրատան և ժամանակի արդիւնք, զոր կը հասաստեն տառից նոյնութիւնն և տպագրութեան ոճն : Վերնագիր ունի. « Վասն Գանի » . իսկ սկզբնական խորագիրն կարմրագեղով գրոյմուած է այսպէս. « Գիր ամենայն ցեղ գահի : Աս պաւղպատ դանակ, երեք բեռութեան և տեսունադէ ի վերայ վիրին, և սսէ զաղ(աւթս) » : Այս ազօթից, որ զդես և զղիթս կապելու ձեւ մի է, կը յաջորդէ սազմոս մը. և ապա « Մաղթանք առ սքանչելագործ սուրբ նշանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ », յորում կը նշանակին Հայաստանի զանազան վանքերու և օտար աշխարհաց մէջ գտնուած ուխտի սուրբ նշաններն :

« Ուրբաթագրոց վերջին երկու թուղթերուն առաջին էջն կը պարունակէ « Գիր շարակին » վերնագրով՝ պահպանութեան անշտան մաղթանք մի. իսկ երկրորդ և երրորդ էջերուն վրայ գրոյմուած են կարգաւ նոյն մատենին էջերուն սկզբան բառերն, թերթերու կարգն ցուցանելու համար : Վերջին (երրորդ) էջին վրայ կը գտնուի նաև տպագրատան խաչանկէ : — Այս հին տպագրութեանց նմանահանութիւնքն են յէջա 397 և 399 :

Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

Դարձեալ նոյն տարւոյն մէջ և նոյն տըպարանի հրատարակութիւն, յորմէ՛ երկու օրինակք կը գտնուին ոյժմ, ինչպէս ծանուցինք. մին՝ Երուսաղեմի Մատենադարանին մէջ, և միւսն սեպհականութիւն Գեր. Տրդատ վ. Պալտան, Կեսարիոյ առաջնորդին :

Խորագիր ձակատն՝ առաջին թղթի առաջին երեսին մէջ տեղը՝ այսպէս.

Տաղարան է սայ հոգոյ և մարմնոյ

« Պարունակութիւնն է. 1. Երեք տաղ Լուսարդայ և Տրգա-

գրոյն, զոր արդէն շատ անգամ յիշատա- կեցինք :

Ա Ղ Ք Ա Ր Բ

Նոյն 1513 տարուան և նոյնանշան սը- պարանէն հրատարակուած, որոյ վրայ հե- տեւեայ տեղեկութիւնները կուտայ վենետիկոյ Մխիթարեանց Բագմավիկ հանդիսարան, ո- ռոց Մատենադարանին մէջ կը պահուի օ- բինակ մը այս գրքէն :

« Հարկ չէ, կ'ըսէ յօղուածագիրն, բա- ցատրել մեր ընթերցողաց թէ ինչ նշանա- կութիւն և իմաստ ունի այդ անուշը. բայց բովանդակութեանը մէջ կը գտնենք ոչ միայն լոկ գուշակական, բռնեք նաեւ աւելորդա- պաշտական հասուածներէ զատ՝ նաև Բժը- կարան մը : Քսանըչոքս ութածալ թերթերէ կազմուած է գիրքս. և այս թերթից թուերն նշանակուած են կանոնաւորապէս հայերէն ստուերով՝ իւրաքանչիւր թղթի էջերը թուա- գրելով՝ այսպէս. ա. — ա. ր. — ա. գ. — ա. գ... մինչ ի գ. — գ. ա. — գ. ր. — գ. գ. այս վերջին թուագրէս ետքը իր պակա- սին թղթեր. որովհետև յաջորդ թուղթն կը նշանակուի. ժ. գ. — ժ. դ... մինչև ժ. գ. ր. կանոնաւորապէս : Իսկ յաջորդ թուղթն աւ- բուած է, և կամ փակցուած նորագոյն ե- կամուտ թղթոյ մի հետ. որոյ վրայ նորա- ձեւ ձեռագագիր ստուերով ընկօրինակուած է պակասաւոր էջը : Կանոնաւոր յաջորդու- թիւն ունին նաեւ ժ. ա. — ժ. գ. և այլն, մինչև ժ. և : Կը պակսի գարձեալ ժ. ր. թուղթը. բայց յաջորդէն ժ. ա. — ժ. գ. մինչև ի. գ. ուղիղ շարուած են. իսկ ի. գ. պակասաւոր թղթոյն տեղ՝ նորս պարունա- կութեան ընկօրինակութիւնն ազուցած է նօտրպիր. որոյ կը հեռերն ի. ե. — ի. գ. — ի. ե. և այլն. մինչև իա. ր. — իր. ա. : Շարունակութիւնն իր. ր. և այլն. մինչև իդ. գ. ամբողջ կայ. կը պակսի իդ. դ. և վերջնոյս կը յաջորդեն առանց գրա- նշանի երկու թուղթք միայն, որովք կ'աւարտի մատեանն. վերջնութեւ երեսին վրայ կարմիր թանաքով գրոյմած կրիւով զնոյն նշան տպա- գրատախն. ինչ որ նախընթացաբար վերջալ

կին տպագրութեանց մէջ : Իսկ վերջին երեսին վրայ՝ թերթերուն տառանիշքն շարուած են չորս տողերով աէն մինչև ց'իս, յաւելուա- ծովս. « Գիրքս բովանդակ ամէնն իդ տեօր է, և ամէն տեօր ք թուիթ է ո »

Գրքին երկայնութիւնն է 16 հարիւրը- պամեր, իսկ լայնութիւն 10 հարիւրորդա- մետր : Տպագրութեան շարքին մէջ քանի մը բառեր ձեռքով գրոյմուած են...

« Առաջին և երկրորդ էջերը վերնագիր ունին կարմրագեղով Աղբարք արանց և կա- նաց 1, յորում մէջ կը բերուին նստ հնոց կարծիք՝ մարդկային բնատրութեան զանա- զանութեանց մասին, լատ իւրաքանչիւր կեն- զանակերպի յորում ծնանին : Այս տեսու- թիւնս երկուքի բաժնուած է. այս ինքն ի ձիրս և ի թերութիւնս կանանց, և ի ձիրս և ի թերութիւնս արանց, մի առ մի ըստ իւրաքանչիւր նշանակաց կենդանակամարին :

« Բէջն 2 23 (թուղթ ր. 6.) անվարժ գրչագիր մը կը գրոյմէ ի լուսանցս. « Թի- վին ՌԱ. բարտանք Խօծայ Թովութիանան » որ է ամե ֆրիսասոսի 1552 : Այս Խօծայ անձն՝ իւր կնիքը գրոյմած է գրքին մէջ յ'էջ 83 (թուղթ գ. գ.) : Աղթարքն կ'աւարտին կիսկատար. բայց ամենամերձ յաւարտն՝ յ'էջ 83 : Իսկ 84 էջն կը սկսի ի սկզբանէն պակասաւոր վիճակաց կամ քսկստից շարք մը, ի գլուխս գլուխս բաժանեալ՝ յանուն զանազան առաքելոց և անտարանչաց, և այլն. և կը ձգի մինչև յ'էջ 118 (թուղթ ժ. դ.) : Իսկ 119 երեսին վրայ գրոյմուած է կենդանակամարի խոշորագիծ պատկերն :


« Պատկերին կը յաջորդէ Տարեցոյց մի : կամ յատկապէս խորագրեալ Տաւուտերա-

1. Այս Աղբարքի քանի մի թերթերու, ան- շուշա յատուկ դիտաւորութեամբ, մի կողմին խորագրէք և զարգագրէք կարմիր թանաքով տպուած են, և միւս կողմանն սեւ թանաքով : Այս է պատճառն որ վերջոյնեալ տպագրական նշանն Աղբարքի մէջ կարմրագոյն տպուած է, իսկ Որդարագրոց մէջ սեւագոյն :

2. Էջերու հոյունն նորագոյն ժամանակաց ձեռքով գրոյմուած թուերու համեմտե է, և ոչ թե տպագրուած :

ցոյց . յորում երկրիս զանազան կողմանց
համար՝ բարոյ կամ չարի գուշակութիւնք
կ'աւանդին , ըստ իւրաքանչիւր փոփոխման
արեգական ընթացից ի կենդանակերպս : Այս
գուշակութեանց էջերէն միոյն վրայ (Թուղթ

ժր . ր) լուսանցից մէջ կը կարգանք ընտիր
հին բոլորագրով գրուած . « Այս Աղթարքս
Մուրատինն է » . որ անշուշտ մատենին հին
ստացողաց մին պէտք է եղած լինի , նման
վերցիչելոյն խոնայի :



« Տանուտերացոցին կը յաջորդէ Ամաս-
ցոյցը ամենայն եղականաց , որք նախընթացին
նման բարի ու չարի գուշակութիւնք են եր-
կտասան ամոց վրայ բաժանուած , և կը

ձգի մինչեւ յ'էջ 167 (Թուղթ ժե . 9 .) յո-
րում կը սկսի կարմրագեղով հոր գլուխ մի'
վերնագրովս . « Ումնն իմաստասիրի ստա-
ցեալ յազազս լուսնին աւուրցն , որ վերագն

յայտնէ » : . . . Նոյն այս երեսին վրայ գը-
րուցնուած է ձեռօք ուրիշ նոր կնիք մը՝ այլ
ստացողի մատենին :

« Այս երազացոյց կ'աւարտի յ'էջ 177
(Թուղթ Ժգ. գ.) ուր կը սկսի նոր խորագրով .
« Սրբոյնկիւրդի հայրապետին ասացեալ է վասն
կադանդաց թէ զինչ լինիցի » եթէ կադանդն
ի կիրակի լինի », և այսպէս եթէ երկուշարթի,
եթէ երեքշարթի, . . . մինչև ցշարթ : . . .

« Յաջորդ գլուխն՝ յ'էջ 178 (Թուղթ Ժգ.
գ) կը խորագրուի . « Վասն աստեղաց ցուա-
նալոյ » և յաւելուածն « Յաղագս շարժման »
(իման զետնաշարժոց), « որ են ցուցակ կամ
նշանակը բարւոյ և չարի » . ինչպէս և եօթ-
նեկին ամէն մէկ աւարց մէջ ծնած տղայոց
համար գուշակութիւնըն . և « Յաղագս ամպոց
և երկնիցն շարժման » գլուխն, որ կ'աւարտի
յ'էջ 194 (Թուղթ Ժե. դ) :

« Մինչև ցայսվայր յիշածներս գըրին եր-
կու երբորդ մասը կը բռնեն . մինչև 194
երես, յորում կը սկսի Բժշկարանն Ճալինու
(Քալիանոս) հաքիմի՝ խորագրաւ . « Բժշկա-
րան և հաքիմարան ըստոյզ և զարմանալի
Մեծին Ճալալիտ հաքիմին արարեալ » . և
յ'էջ 296 (Թուղթ իր. ե) կ'աւարտի և բժրշ-
կարանն և մատենան՝ վերոյեղեալ տպագրա-
տան նշանաւ :

*
* *

Վեշտասաներորդ դարուն առաջին կիսուն՝
երկու հաշկանունն երբոպացի արեւելագիտաց
կը հանդիպինք, յորոց մին իտալացի և միւսն
գաղղիացի, և իրենց թոլուցած երկասիրու-
թեանց մէջ կը տեսնենք հայկական լեզուի
ուսումնասիրութեան հետ նաև նոյն լեզուի
տպագիր տառից գործածութիւն . Ասոնց մէջ
իտալացին է Թեոֆան Ամբրոսիոս՝ փառիացի,
Ալպանէզէ կոչուած ազնուասրմ գերբոստա-
նէ, ծնեալ ի 1469, յուխտէ լասերանեան
կանոնիկոսաց, և ի Լեւոն Ժ քահանայա-
պետէ Պոլսնից համալսարանին ուսուցիչ ա-
նուանեալ ասորի և քաղղէացի լեզուաց և
դպրութեանց : Վախճանեցաւ ի 1540 :

Իրեն կենսագիրը (Մացցուքելլէ և այլք),
հրաշալիք մը կը ստորագրեն զինք յիշողա-
կանի, և անշուշտ չափազանցութեամբ կը յա-

ւելուն՝ թէ զեռ եւս հնգետասնամեայ՝ գրու-
թեան ոնց ընտրութեամբ կը հաւատարէր ի-
տալացի, լատին և յայն դասական մատենա-
գրաց : Բայց ինքն թեֆանոս իր գրոց մէկուն
մէջ, ի Նեքրափոսթեան քաղղէական, աւորի
և հայ լեզուաց՝ անկեղծաբար կը խոտտովանի
թէ իր առաջին ուսուցիչներէն իրիս անկա-
տար հմտութիւն մը ստացած է հին լեզուաց .
և թէ անոնց ուսմամբ զբաղելու գլխաւոր ա-
սիթն եղած է՝ Յուլիոս Բ քահանայապետին
հրաւիրանօք սկսած և Լեւոն Ժի ժամանակ
շարունակուած ընդհանուր ժողովոյն ատեն
հանդիպած զէպք մը, երբ քանի մը եթով-
պացի և ասորի-քաղղէացի քահանայք փա-
փառեցան որ հոգեւոր իշխանութենէ թոյլ
արուի որ իրենց սեպական լեզուօն ու ա-
բարողութեամբ կարենան պատարագել : Հռովմ
ուշեց որ նախապէս իրենց պատարագամա-
տոյց քննուի . և թէ այդ զորժ թեֆանոսի
յանձնուի, իբրու տեղեկագունի արևելեան
իրաց և լեզուաց : Լատերանի կանոնիկոսը
ոչ անծանօթ իր անբաւականութեան առ այդ,
մրան դրուած վտանգութիւնը արդարացընելու
համար՝ մարտնի քահանայի մը առաջնորդու-
թեամբ անոնց ուսման հետեւելոյ, քիչ ա-
տենի մէջ կարծուածէն աւելի յառաջգիծու-
թիւն բրաւ : Լեւոն քահանայապետին մա-
հուրնէն ետքը՝ թեֆանոս իր հայրենիքն զառ-
նալով, զբաղեցաւ պատրաստուիլ քաղղէական
սաղմոսարանի մի տպագրութեան, յորոյ ի
սկիզբն կ'ուզէր յառաջարան տեղեկութեամբ
ձաշակ մի ընծայել ուսումնասիրաց արեւե-
լեան լեզուաց վրայ, որք զեռ եւս անծանօթ
կամ քիչ ծանօթ էին յԵրուսա . և արդէն
հարկաւոր եղած տպագրութեան տառք ձու-
լուած էին, երբ 1527ին բունդատուելով
երթալ ի Հոսեաննա, ի նմին ժամանակի
աւարեցաւ փառիա, և ծանր ծանկով իր հա-
ւաքած ձեռագիրք՝ յաղթողաց ազահութենէն
չկրցան զերծանիլ . որով թեֆանոսի սիրաբ
կտորած՝ չուզեց միւսանգամ գառնալ ի փա-
ռիա, այլ գնաց ի Ռէճնիոյ և անտի ի Ֆեր-
րարա, ուր զիպուածով գտաւ հնամանակի
մը քով տպագրութեան համար պատրաստած
իր քաղղէական սաղմոսարանը : Միւս անգամ
ձեռք պառա զայն հրատարակելու մտաւոր-

Թիւն. բայց յառաջ ուզեց ի լոյս ընծայել նե-
րածութիւն մը, զամ՝ արեւելեան լեզուաց, ու-
րովք դբաղեր էր. ուսումնասիրութիւն մի, որ
նախ սկսած հրատարակուիլ ի Ֆերրարա, և ապա
ուարսուեցաւ ի ֆաւիա, ուր փոխադրուեց էր
եկեղեցական ասագութեամբ: Գրքիս խորա-
զիրն է Introductio in Chaldaicam lin-
guam, Syriacam atque Armenicam, et
decem alias linguas, և այլն. յորում ա-
ւելի իրեն ծանօթագոյն ասորի, քաղղէական
և հայ լեզուներով պարսպելով, երկարորէն

կը խօսի, աւելի կամ՝ նուազ հմտութեամբ,
մեր լեզուի և անոր քերականութեան նկատ-
մամբ, և հետևաբար մէջ կը բերէ նոյն լե-
զուով ու անոր տպագիր ստուերով ոչ միայն
պլլեայլ սողեր, այլ նաև էջ էջ հատուած-
ներ, բառական ճաշակով և ընտրութեամբ
յերբարած և ձուլուած տառերով, յորոց ճա-
շակ մը կ'ուզենք նմանահանութեամբ մեր
ընթերցողաց աչքին դիմաց դնել, իբրու մեզի
ծանօթ առաջին հայկական տպագիր տառք:
Ոչ ոք յառաջէքան զնա ունեցեր էր իրեն

Երանի աղքատաց հոգով, զի՛նոցա է արքայո՛ւ-
թախն երկնից. Երանի սգաւորաց, զի՛ նոցա
միխիթարեսցին. Երանի հեզոց, զի՛ նոցա ժառ-
անգեսցեն զերկիր. Երանի որ քաղցեալ և ծափ

նման արեւելեան աստից ճոխ հաւարում մը.
և իրեն այցելութեան եկող այցելու հետա-
քրքիր բանասիրաց կը բաշխէր այլևայլ լեզուաց
գրուածներ: Այս բարեկամաց թուոյն մէջ էր
նաև Փոսթէլ գաղղիացին:

* * *

Բազմարկածեան կեանք ունեցող անձ
մ'էր Փոսթէլ, ծնեալ ի 1540 մերձ յԱւ-
րանջ Գաղղիոյ. սիրով ուսմանց և հետաքնին
հետամուտ նորութեանց. և այդ փափաքով
վառուած՝ պատեհութիւն ունեցաւ 1537ին
Գաղղիոյ կողմանէ զրկուած պետական անձի
մը ընկերանալով, երթալ մինչ ի Պոլիս,
անտի ի Յուճաստան, ի փոքրն Ախա և
Սիւրիոյ մէկ մասը: Զբաղեցաւ այն կողմե-
րու ժողովրդոց լեզուաց ուսմամբ, և ունեցած
դրամն ծախեց հին ձեռագիրք օտանալու:
Դառնալով ապա յիտալիա, ծանօթացաւ
թեոսէոս Ամբրոսիոսի հետ, որ և ընծայեց
նմա տերունահան աղօթքը հայ ու քաղղէա-
կան լեզուով, ու արեւելեան քանի մի ազգաց
տառեր: Փարիզ հասնելով՝ հետեւէ եղաւ ար-
պաղարկութեամբ ընծայել՝ հատարակաց՝ ճանա-
պարհորդութեանցը մէջ ձեռք ձգած այբուբե-

նից վրայ տեղեկութիւն մը. բայց որովհետեւ
անոնց պատկանաւոր խրաբանչիւր լեզուաց
տառք՝ շատերը կը պակսէին, չկարենալով
անոնց ձուլման համար կարևոր հայերն ու
մայերը շինելու բաականութիւնն ունեցող
ճարտար արուեստագէտներ գտնել, ստիպուե-
ցաւ Փոսթէլ փայտի վրայ փորագրել տալ. և
այդ կերպով կրցաւ տպագրել հետևեալ խո-
րագիրն ունեցող երկասիրութիւնը. Lingua-
rum duodecim caracteribus differen-
tium alphabetum, introductio ac le-
gendi modus longè facillimus, ի 1537,
ամփոփեալ յ'75 էջ: Այս երկատասան լե-
զուաց մէջ է նաև հայերէնն: Բաական հե-
տաքնութեան արժանաւոր գրուած մը, որով
կը ջանայ տպացուցանել թէ ամենայն լեզուք՝
նոյն իոյ յոյն և լատինահանն՝ երբայականէն
առաջ կու գան: Թեոսէոսի ալ օրինակ մը
այս զրքէն ընծայ զրկած է հեղինակն, ինչ-
պէս իբրաւ. մէջ եղած թղթակցութիւնք կը
նշանակեն: Յրանտուս Ա. Թազարոք Գաղղիոյ,
մեծ համարում ունեցնալով Փոսթէլի վրայ՝ աւ-
նաշարկեց իրեն դառնալ յարևելս, խոստանա-
լով 4000 սկուտ արեւելեան գրուագց տառց-
ման համար: Յանձնառու չեղաւ նա գրուած՝

պայմաններուն. բայց յետոյ ուրիշ անթով
կրկին զարձաւ յարեւելս, և շատ ձեռագիր-
ներ ձեռք ձգեց. զորս յետոյ կարօտութեան
պատճառաւ ստիպուեցաւ վաճառել Փարիզու
և Գերմանիոյ մատենադարանաց: Թեւեւոք
մահուընէն ետքը դառնալով ի Փաւիա, ու-
զեց զնել իրեն սեպհականութիւն արքայացի
ստաբերը. բայց որովհետեւ պահանջուած գինը

հատուցանելու կարողութիւն չունէր, առա-
ջարկեց որ ի համայնարանի քաղաքին ու-
սուցչութիւն ընելով ձրի՝ վճարած համարուի.
յետոյ անցնելով ի Քրէմնա՝ ճարտար ա-
րուեստագիտի մը յանձնեց նոյն տառից հայ-
երբը շինել, և այնպէս կը յուսար սպազրել
չոր կտակարանը:

(Շարայարեղի)

Գ Ե Ղ Ա Ր Ո Ւ Ե Ս

Ք Ա Ն Կ Ս Կ Ա Գ Ո Ր Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

(Շար. 308 իջին և Վերջ)

Ը. — Վերածնոյթեան յեղանակին մէջ՝ յիտալիա և ի Գերմանիա

(Ժե և ԺԶ Դարք)



ԱՆԴԱԿԱՅՈՐՈՒԹԻՒՆՆ արդէն ընդար-
ձակ ասպարէզ մի գրուեր էր կա-
մարաղեղնային յեղանակին մէջ, վասն
զի պարագայք և միջոց կը դիւրացը-
նէին իրեն յանսամանս զարգանալ.
Իւր զլիաւոր նպատակն եղաւ դարձեալ շիրիմ-
ներու և սեղաններու զարդագործութիւնն:
Սակայն մէկզի չի թողուց նաեւ քարոզու-
թեան ամպիոններու, մկրտարաններու, օր-
հնեալ ջրոյ ամաններու, վերնատանց, նստա-
րաններու և զասի զարդագործութիւնը: Մաս-
նաւորապէս կը ջանային քանդակագործք ա-
ւելի բնական և ստոյգ երեւոյթ մի տալ ի-
րենց ձեռագործաց: Խառնալուց յատուկ վա-
մութեան ճաշակն սոյն յեղանակիս մէջ եւս
կը զգուշանայ իրականութենէ որ ամենէն
ստորնագոյն և աննշան մանրամասնութեանց
կ'իջնէ:

Տականա՝ վաղուց հետէ առանձնաշնոր-
հեալ բնակարան իտալական արուեստի, զը-

լուս կը կենայ իտալիոյ միւս երկիրներուն:
Նախորդ յեղանակի անցըն՝ ի նորն ցուցը-
նող առաջին նշանաւոր վարպետն՝ եղաւ Յա-
կոբոս դելլա Էստրիկիա մականուանեալն դելլա
Ֆրոնտէ: Իւր գլխաւոր ձեռագործներն են
Լուկիայ մայր եկեղեցւոյն աւանդատան մէջ
հոյակապ շիրիմ մը, Քոլոնիոյ Ս. Պետրոս-
նիոսի գաւթին քանդակածոյ զարդարանքն,
ինչպէս նաեւ Սիենայի Դաշտի հրապարակին
աղբեր անդրին, յերաւի անթերի շինուածք,
որուն համար իսկ իւր մականունը ստա-
ցած է:

Սոյն յեղանակիս ամենէն նշանաւոր և
մեծ քանդակագործներէն է նաեւ Լաբեն-
աիոս Կիրեբրաի (1378—1455): Իւր ձեռա-
գործաց մէջ ամենէն հռչակաւորն է Փլորեն-
տիոյ մկրտարանին արեւելեան դռներն, զորո
տեսնելով Միքելանջեղոս՝ այնքան զարմացաւ,
որ ըսաւ, « թէ « այսպիսի գրունք արժանի
են արքայութեան մտից ծառայելը »: Նման-